



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 2330

«ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՐԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ  
ՓՈՂՈՑԻ 25-5 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 14 օգոստոսի 2024թ. տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն «ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Սուրենի Դանիելյանի կողմից ք Վանաձոր, Կ.Դեմիրճյան փողոցի 25-5 բենզալցակայանի հասցեում, սեփականության իրավունքով Արթուր Սուրենի Դանիելյանին պատկանող հողամասում իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի օգոստոսի 22-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, սակայն Արթուր Դանիելյանը լսումներին չի ներկայացել (փոստային առաքման ծանուցման հետադարձ կտրոն թիվ L0124121388AM, որը 26.08.2024թ. ստացվել է «անհայտ» նշումով): Այնուհետև սույն թվականի սեպտեմբերի 3-ին կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված): Այսպիսով Արթուր Դանիելյանը վարչական վարույթի լսումներին պատշաճ



ծանուցվել է և կրկին չի ներկայացել ( << ինտերնետային ծանուցման պաշտոնական կայք «azdarar», թիվ 1539932 ):

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

<< քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքեր, շինությունը կամ այլ կառույցը: Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրիսունսպատիկից հազարիինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 219.<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 219.1-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «ՀՀ քաղաքավիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 29.1 հոդվածի 15-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇԵՑԻ

- 1.«ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արթուր Սուրենի Դանիելյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
- 2.«ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
- 3.Քանդել Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի 25-5 բենզալցակայան հասցեում սեփականության իրավունքով Արթուր Դանիելյանին պատկանող հողամասում վերջինիս կողմից իրականացվող ինքնակամ շինարարությունը՝ վերացնել հետևանքները, հողամասը բերել նախկին տեսքին:
- 4.Քանդման աշխատանքների վերահսկողությունը դնել Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի վրա:
- 5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
- 6.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
- 7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 8.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
- 9.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ հոկտեմբերի 18  
ք.Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2331

«Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ 5Ա ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՄԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ  
ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՄԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 27.02.2024թ. թիվ Հ-5Ա-6-1/1/15-10-24 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994 որոշմամբ հաստատված կարգի 78-րդ և 80-րդ կետերով՝ **որոշում եմ.**

Թույլատրել «Վ.Դանիելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ 5Ա միկրոավտոբուսային երթուղին համալրելու GAZ 322132 մակնիշի 37 BL 858 պետհամարանիշի միկրոավտոբուսով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2332

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ  
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով բողոքարկված վարչական ակտի նպատակահարմարության տեսանկյունից, քննարկեց Անուշավան Արամայիսի Հարությունյանի կողմից 20.09.2024 թվականին ներկայացված թիվ 02/16038 վարչական բողոքը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 21 օգոստոսի 2024 թվականի «Անուշավան Արամայիսի Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1933 որոշման դեմ:

Վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվեց գործում առկա ապացույցներով:

### 2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.07.2024թ. տրված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրության համաձայն՝ Անուշավան Արամայիսի Հարությունյանը (ծնված՝ 24.07.1950թ., անձնագիր՝ AT0543264, տրված՝ 17.08.2020թ., «018»-ի կողմից, հասցե՝ ք.Վանաձոր Տարոն-2, Տաշիրի փողոց 1 տուն) Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ 7-19 հասցեին և մյուս կողմից Տարոն-2, Տաշիրի փողոց 1 տուն հասցեներին կից տարածքում կատարում է շինարարական աշխատանքներ, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք է:

2024 թվականի հուլիսի 22-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի օգոստոսի 19-ին հրավիրել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել էր Անուշավան Արամայիսի Հարությունյանը: 19.08.2024թ. կազմված արձանագրության համաձայն վերջինս հայտնեց, որ դեռևս 2024թ. մարտ ամսին դիմել է Վանաձորի համայնքապետարան համապատասխան շինարարության թույլտվություն ստանալու համար, սակայն մինչև թույլտվություն ստանալը Վանաձոր համայնքի հողի վրա իրենց սեփական տանը կից տարածքում ինքնակամ սկսել է

շինարարական աշխատանքներ, սեզոնի հետ կապված ժամանակ շահելու համար: Վերոգրյալի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 21 օգոստոսի 2024 թվականին ընդունվել է «Անուշավան Արամայիսի Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1933 որոշումը:

Որոշման համաձայն Անուշավան Արամայիսի Հարությունյանը ենթարկել է վարչական պատասխանատվության՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով և վերջինիս առաջարկվել է քանդել Վանաձոր քաղաքի Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ 7-19 հասցեին և մյուս կողմից Տարոն-2, Տաշիրի փողոց 1 տուն հասցեներին կից տարածքում գտնվող ինքնակամ շինությունը՝ վերացնել հետևանքները:

Անուշավան Արամայիսի Հարությունյանը որոշման վերաբերյալ իրազեկվել է 24.08.2024 թվականին, ուստի որոշումը ուժի մեջ է մտել 25.08.2024 թվականին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Անուշավան Արամայիսի Հարությունյանի կողմից վարչական բողոք ներկայացվել է 20.09.2024 թվականին: Բողոքարկման ժամկետը համապատասխանում է օրենքին:

Վարչական բողոքում բողոք բերող անձը վկայակոչում է հետևյալ փաստերը.

Վանաձոր քաղաքի Տաշիրի փողոց տուն 1 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքին կից գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 50քմ մակերեսով հողամասում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով 05.03.2024թ. դիմել է Վանաձոր համայնքի ղեկավարին, ի պատասխան որի 11.03.2024թ. Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ստացել է գրություն այն մասին, որ հողամասը հնարավոր է ձեռք բերել ոչ թե ընդլայնման, այլ աճուրդային կարգով, որից հետո վերջինս սպասել է, որպեսզի այդ ընթացակարգով ձեռք բերի հողամասը: Շուրջ հինգ ամիս սպասելուց հետո որդին՝ Տիգրան Անուշավանի Հարությունյանը, վերոնշյալ հողամասում՝ 30քմ մակերեսով, նախաձեռնել և սկսել է կառուցապատման աշխատանքներ: Նրանց միջև տեղի են ունեցել տարաձայնություններ այդ հարցի վերաբերյալ, սակայն վերջինս պատճառաբանել է, որ սեզոնային հանգամանքը հաշվի առնելով է իրականացնում այդ շինարարական աշխատանքները: Այս հարցի կապակցությամբ հարուցվել է վարչական վարույթ, որի ընթացքում չի նշել, որ շինարարական աշխատանքները կատարվել են որդու կողմից, քանի որ նա իր ընտանիքի անդամն է, կառուցապատման աշխատանքները կատարել է իր գույքին կից գտնվող հողամասում, այդ աշխատանքները ենթակա են դադարեցման և քանդման և չի գիտակցել, որ կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության, մինչդեռ ինքը չի կատարել տվյալ աշխատանքները, ավելին՝ ընդդիմացել է և կողմնակից է եղել, որ աշխատանքները սկսեն օրինական ընթացակարգերն անցնելուց հետո, որի կապակցությամբ էլ սկզբից դիմել էր հողամասը ձեռք բերելու խնդրանքով:

### **3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 21.08.2024 թվականի թիվ 1933 որոշումը ընդունվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.07.2024թ. տրված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրության հիման վրա: Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցված վարչական վարույթի լուսմների ընթացքում Անուշավան Արամայիսի Հարությունյանը տեղեկացվել է իր կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով

նախատեսված իրավախախտում կատարելու, իրավախախտման հետևանքների վերաբերյալ: Անուշավան Արամայիսի Հարությունյանը ընդունել է իր կողմից իրավախախտումը կատարելու փաստը և այլ անձի կողմից այն կատարելու վերաբերյալ որևէ տեղեկություն չի հայտնել, որի հիման վրա էլ ընդունվել է Վանաձոր համայնքի ղեկավարի 21.08.2024 թվականի թիվ 1933 որոշումը: Որոշումը իրավավաչափ է և փոփոխման ենթակա չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇԵՑԻ

- Անուշավան Արամայիսի Հարությունյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:
- Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
- Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ հոկտեմբերի 21  
ք. Վանաձոր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2333

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳԻ ԳԻԳՈՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹԸ ԵՋՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ Լիլիթ Գևորգի Գիգոյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.09.2024 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Լիլիթ Գևորգի Գիգոյանը ք. Վանաձոր, Նարեկացու փողոց թիվ 91/3 հողամաս և թիվ 91 խորտկարան հասցեում Վանաձոր համայնքի ղեկավարի 27.05.2024թ. թիվ 1175 որոշմամբ շինարարության թույլտվության կասեցման պարագայում իրականացրել է շինարարական ածխատանքներ, որի փաստով հարուցվել է վարչական վարույթ:

2024 թվականի սեպտեմբերի 25-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի հոկտեմբերի 9-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել էր Լիլիթ Գիգոյանը, որը վարչական վարույթի լսումների ընթացքում հայտնեց, որ Վանաձոր, Նարեկացու փողոց թիվ 91/3 հողամաս և թիվ 91 խորտկարան հասցեում շինարարության թույլտվության համաձայն իրականացնում է հասարակական նշանակության օբյեկտի շինարարություն: Վանաձոր համայնքի ղեկավարի 27 մայիսի 2024 թվականի թիվ 1175 որոշման համաձայն կասեցվել է շինարարության թույլտվությունը և դադարեցվել են շինարարական աշխատանքները: Լիլիթ Գիգոյանը հավաստիացրեց նաև, որ որոշումը ստանալուց հետո ոչ մի շինարարական աշխատանքներ



չեն իրականացվել, իրենք շինարարության թույլտվությունից և նախագծից դուրս ոչ մի անօրինական աշխատանք չեն իրականացրել և ներկայումս շինարարական աշխատանքները դադարեցված են: Որոշումը ստանալուց հետո իրականացրել են միայն տարածքի շինարարական աղբի մաքրման աշխատանքներ:

Վանաձոր համայնքի ղեկավարի 22.09.2023թ. թիվ CPPO-0000-8676 շինարարության թույլտվություն համաձայն Լիլիթ Գիգոյանին Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր քաղաք, Նարեկացու փողոց թիվ 91/3 հողամաս և Նարեկացու փողոց 91 խորտկարան հասցեում տրվել է հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման թույլտվություն, որը Վանաձոր համայնքի ղեկավարի 27 մայիսի 2024 թվականի թիվ 1175 որոշման համաձայն կասեցվել է և շինարարական աշխատանքները դադարեցվել են:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը գտնում է, որ Լիլիթ Գևորգի Գիգոյանի մոտ բացակայում են վարչական իրավախախտում կատարելու հիմքերը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1.25.09.2024 թվականին Լիլիթ Գևորգի Գիգոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել՝ վարչական իրավախախտման հիմքի բացակայության պատճառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ ~~հսկողություն~~ իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2334

### ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԲԱՂՂԱՄՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 04.09.2024թ. կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձոր քաղաքի Շիրվանզադե փողոցի 4 հասցեի բնակչուհի Ռուզաննա Սարգսի Բրուտյանի դիմումի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 23.09.2024 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, համաձայն Վանաձոր քաղաքի Շիրվանզադե փողոցի 8 հասցեի արևելյան մասում քաղաքացի Սեյրան Բաղդամյանը ինքնակամ կառուցել է մետաղական ծածկարան (սեփականատեր Սեյրան Գրիգորի Բաղդամյան 1956թ. ծնված), որը անհարմարություն է ստեղծում հարևանուհի Ռուզաննա Բրուտյանի համար:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 23.09.2024 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 7-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել են Ռուզաննա Սարգսի Բրուտյանը և Սեյրան Գրիգորի Բաղդամյանի լիազորված անձ Մարինե Պետրոսի Զաքյանը:

Վարչական վարույթի լսումների ժամանակ Ռուզաննա Բրուտյանը պնդեց իր բողոքը իսկ Սեյրան Բաղդամյանի լիազորված անձ Մարինե Զաքյանը հայտնեց, որ նշված շինարարական աշխատանքները իրականացրել է 1996 թվականին իր ամուսինը՝ Սեյրան Բաղդամյանը ՀՀ պատգամավորների Վանաձորի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի հունիսի 18-ի թիվ 6/8 որոշման ու ավտոտնակի վերակառուցման, որպես խանութ, նախագծման թույլտվության համապատասխան և ներկայացրեց վերը նշված թիվ 6/8 որոշման ու նախագծման թույլտվության պատճենները: Վերը նշված ծածկարանը ներառված է նախագծման հատակագծի մեջ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Հետևաբար, բացակայում է Սեյրան Բաղդամյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հիմքերը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1.05.09.2024 թվականին Սեյրան Գրիգորի Բաղդամյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել՝ վարչական իավախախտման հիմքի բացակայության և վարչական տույժ նշանակելու օրենքով սահմանված ժամկետը անցնելու պատճառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՔԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2335

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՍԵԿՄԵՆՔԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
2025 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 2025 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյանի փողոցի թիվ 147/3-15/1 հասցեին կից գտնվող հողամասին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2025 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1.Որոշման վերնագրում «Վ.Համբարձումյան» բառերը փոխարինել «Երևանյան խճուղի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2336

ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՕԳՈՍՏՈՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
1578 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսան Սուրենի Խաչատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 21 օգոստոսի 2019 թվականի թիվ 1578 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 21 օգոստոսի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Այվերոյան փողոցի թիվ 2 հասցեի բնակելի տան և շինությունների նկատմամբ Նշան Մարտիրոսի Անտոնյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1578 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին կետում «Մարտիրոսի» բառը «Մարտինի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2337

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ  
2145 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի Ղեկավարի 16 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 2145 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի Ղեկավարի 16 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բել. թիվ 9ա/1 հասցեում գտնվող Արամ Վանիչկայի Մարուքյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը օրինականացնելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2145 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1.Որոշման նախաբանում «եզրակացությունը» բառից հետո լրացնել «անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,» բառերով:

2.Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բել. թիվ 9ա/1 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տարոն-4 Բելառուսական թաղամաս, 9/1 ավտոտնակ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
Ք. Վանաձոր





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2338

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59-1/2  
ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձոր համայնքի ավագանու 13 մայիսի 2024 թվականի թիվ 28 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14<sup>3</sup>-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 59-1/2 հասցեին կից գտնվող 0.0060 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց, 59/8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2339

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՀԱԿՈՔՅԱՆ 2 ՆՐՔԱՆՑՔ 2  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ամալյա Անդրեասի Օրդինյանի լիազորված անձ՝ Նաիրա Մարտինի Ալեքսանյանի դիմումը, 06.06.2023 թվականին տրված թիվ 3486 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20230606-90-6990332), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29012015-06-0004 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Հ. Հակոբյան 2 նրբանցք 2 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Հակոբյան 2 նրբանցք, 3/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ հոկտեմբերի 21  
ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2340

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0071-0005) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրանուշ Աղասու Առաքելյանի 27.09.2024 թվականի թիվ 02/16406 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25092024-06-0017 վկայականը, 27.09.2024թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5467 (նոտարական ակտի կոդ: 843-20240919-84-8352250) վկայագիրը, 27.09.2024թ. տրված սեփականության իրավունքի թիվ 5465 (նոտարական ակտի կոդ: 843-20240921-105-8356774) վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /196443/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0071-0005) գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 6-րդ փողոց, 18 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2024թ. հոկտեմբերի 21  
Ք.Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2341

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0011-0005) ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնարիկ Կոյայի Ամիրյանի և Ավագ Ռոբերտի Գասպարյանի 30.08.2024 թվականի թիվ 14841 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1717204 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր: 06-031-0011-0005) հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք Էներգետիկների 4-րդ փողոց, 19 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
Ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2342

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃ 70/2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերա Նիկոլայի Ալոյանի լիազորված անձ Արմեն Ալբերտի Մատինյանի 22.08.2024 թվականի թիվ 14362 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 990994 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 21.08.2024թվականի թիվ 6198 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը:594-20240821-79-8259650), 21.08.2024թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 6201պայմանագիրը(594-20240821-205-8259627), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Երևանյան խճ 70/2ա հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 70/7 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2343

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (Ծածկագիր: 06-084-0005-0037) ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Հովհաննեսի Վարդանյանի լիազորված անձ Ջոիրաբ Լևոնի Պարոնյանի 27.09.2024թ. թիվ 02/16412 դիմումը, 19.08.2024թ. տրված թիվ 66AA8531718 (նոտարական ակտի կոդ: 889-20240927-67-8375878) լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 133 թարգմանությունը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600338 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0005-0037) գտնվող տնամերձին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 16-րդ փողոց, 27 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
Ք. Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2344

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵՇԻ ՊՈՂՈՏԱ 44-5  
ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵՇԻ ՊՈՂՈՏԱ 44-6/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՂԱԹԵԼ  
ՌԱԶՄԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ  
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սաղաթել Ռազմիկի Ալեքսանյանի 12.07.2024 թվականի թիվ 02/12030 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 26062023-06-0022 և 21032019-06-0049 վկայականները, 19 հուլիսի 2024 թվականին տրված թիվ 56 ավարտական ակտ/ շահագործման թույլտվություն/ անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

1.Միավորել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի, Տիգրան Մեծի պողոտա 44-5 և Տիգրան Մեծի պողոտա 44-6/2 հասցեներում գտնվող Սաղաթել Ռազմիկի Ալեքսանյանի սեփականության իրավունքով պատկանող 0.008841 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 52.16 քմ ընդհանուր մակերեսով շինությունները՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 44/8 սրճարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2345

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ 3/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՇԱՎԱՐՇԻ ԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՅՈՐԹ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ  
ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Շավարշի Ազարյանի 06.08.2024 թվականի թիվ 02/13405 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման թիվ 09042020-06-0003 վկայականը, Գասպար Վեքիլյան ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 3/1-1 հասցեում գտնվող, Սամվել Շավարշի Ազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն Գասպար Վեքիլյան ԱԶ-ի կողմից տրված թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և թիվ 7 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 3/1-1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.001986 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/7 հողամաս:

բ.0.001896 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/6 հողամաս:

գ.0.001890 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/5 հողամաս:

դ.0.001890 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/4 հողամաս:

ե.0.001896 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/3 հողամաս:

զ.0.001896 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/2 հողամաս:

է.0.001986 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրի փողոց, 3/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21  
Ք.Վանաձոր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2346

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՅ ԹԻՎ 6  
(6Ի-2) ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՍՄԻԿ ՌՈՒՔԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ  
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ  
ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Ռուբիկի Հովակիմյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1979025 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղաքացիական «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 24.07.2024 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր: 20249MMBUY, 2024XECW6P), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Մյասնիկյան փողոց թիվ 6 (6Ի-2) հասցեում գտնվող, Հասմիկ Ռուբիկի Հովակիմյանին սեփականության իրավունքով խանութը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 6 (6Ի-2) հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.14.2քմ մակերեսով հասարակական նշանակության խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 6/11 խանութ:

բ.72.2քմ մակերեսով հասարակական նշանակության խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 6/10 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2024 թվականի N 2347

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 10/32Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

